ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/49

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Է.Փոթոյանի (պետական գրանցման վկայական թիվ 273.110.1085248),

ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչ

Հ. Սարգսյանի (լիազորագիր, տրված՝ 21.05.2020թ.),

«Վիոլա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 19.05.2020թ.),

քննելով ՀՀ առողջապահության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 15.05.2020թ. ներկայացված (18.05.2020թ. վարույթ ընդունված) բողոքը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 15.05.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից իր կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցել է նաև «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն:

Հիմք ընդունելով հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջը՝ Պատվիրատուն 05.05.2020թ. ժամը 15:00-ին «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին հրավիրել է բանակցությունների:

Ընկերությունը հայտնել է, որ 17-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել «Աիդա Թրեյդ» և «Վիոլա» ՍՊ ընկերությունները՝ ներկայացնելով հետևյալ գնային առաջարկները.

«Աիդա Թրեյդ» ՍՊԸ՝ ինքնարժեք (մեկ միավորի հաշվարկով)՝ 19 950 ՀՀ դրամ, գին՝ առանց ԱԱՀ (մեկ միավորի հաշվարկով)՝ 33 250 ՀՀ դրամ,

«Վիոլա» ՍՊԸ՝ ինքնարժեք (մեկ միավորի հաշվարկով)՝ 9 920 ՀՀ դրամ, գին՝ առանց ԱԱՀ (մեկ միավորի հաշվարկով)՝ 24 800 ՀՀ դրամ:

Բանակցությունների ժամանակ գնահատող հանձնաժողովի քարտուղարը չի ընդունել Ընկերության կողմից հնչեցված հերթական նվազեցումը՝ 19900 ՀՀ դրամ /առանց ԱԱՀ/ նոր նվազեցրած գինը՝ մեկնաբանելով, որ համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի՝ Ընկերությունը չի կարող ներկայացնել 19950 ՀՀ դրամից (ինքնարժեքից) ցածր գին՝ ըստ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի:

Ընկերության այն պնդումը, որ կարող են նվազեցնել գինը, չի ընդունվել գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից:

Ընկերությունը վերլուծությունների արդյունքում եկել է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը չեն արգելում գնի շուրջ բանակցությունների ընթացքում ներկայացնել նոր՝ նվազեցրած գնային առաջարկ՝ նոր՝ նվազեցրած ինքնարժեքով, որը և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն հնչեցրել էր՝ 19900 ՀՀ դրամ՝ գին՝ առանց ԱԱՀ, սակայն այն չի ընդունվել գնահատող հանձնաժողովի կողմից:

Սակայն, նոր՝ նվազեցված գնային առաջարկ ներկայացնելու ժամանակ «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ն ներկայացրել է ինքներժեք 6650 ՀՀ դրամ (հայտով ներկայացրած գնային առաջարկի մեջ մեկ միավորի ինքնարժեքը 19 950 ՀՀ դրամ է), ինչը ընդունվել է գնահատող հանձնաժողովի կողմից և ֆիքսվել Թիվ 4 արձանագրությանը կից հավելվածով:

Այսպիսով՝ Ընկերությունը գտել է, որ պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքը՝ չընդունելով Ընկերության կողմից հնչեցրած նվազեցված գինը՝ 19900 ՀՀ դրամ, ինչը վնաս է հասցրել Ընկերության և պետության շահերին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին չեղարկել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով բժշկական նշանակության ապրանքների մատակարարման գնանշման հարցման 17-րդ չափաբաժնի բանակցությունների արդյունքները և հրավիրել նոր բանակցություններ տվյալ չափաբաժնի մասով, որն էլ բխում է պետության շահերից:

Ընկերության կողմից 22.05.2020թ. ներկայացվել է վերը շարադրված բողոքի լրացում, որով հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գնման գործընթացը մի ամբողջական գործընթաց է:

Ընկերությունը նշել է, որ 21.05.2020թ-ի նիստով արձանագրվել է, որ գնումների պլանը հրապարակված չի եղել, ինչն առաջացրել է որոշակի խնդիրներ, մասնավորապես հենց 17-րդ չափաբաժնի մասով:

Ուստի խնդրել է չեղարկել մրցույթը 17-րդ չափաբաժնի մասով, եթե հնարավոր է, եթե ոչ՝ ամբողջ ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.05.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է տնօրենի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

<u>2. «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 19.05.2020թ. ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/49 բողոքով իրեն որպես երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 20.05.2020թ. ներկայացվել է դիրքորոշում առ այն, որ նշված բողոքով վիճարկվող չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վիոլա» ՍՊԸ-ն և ճանաչվել ընտրված մասնակից:

«Վիոլա» ՍՊԸ-ն հայտնել է, որ www.gnumner.am կայքում հրապարակված բողոքի բովանդակության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բողոքաբեր «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն 17-րդ չափաբաժնի մասով չի կարողացել գնային առաջարկի նվազեցում կատարել ինքնարժեքից, քանի որ գնահատող հանձնաժողովը չի ընդունել գնային առաջարկի նման նվազեցումը, եթե այն կատարվել է գնային առաջարկի ինքնարժեքից ցածր գին առաջարկելու պայմաններում:

«Վիոլա» ՍՊԸ-ն գտել է, որ գնահատող հանձնաժողովի գործողությունները լիովին իրավաչափ են, բխում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունից և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի բազմաթիվ իրավապարտադիր որոշումներից, մասնավորապես.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Ընթացակարգի հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

«Վիոլա» ՍՊԸ-ն վերը նշված փաստերի ու փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում եկել է այն եզրահանգման, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, որոնցով սահմանվել են, որ այն պետք է բաղկացած լինի ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից, և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

«Վիոլա» ՍՊԸ-ն նշել է վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող

հանձնաժողովը, մերժելով մասնակցի հայտը, գործել է իրավաչափ՝ հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Հրավերի 5.1-րդ կետը, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, իրավունք չունի նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարը՝ պահպանելով գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմքունքներով կազմակերպումը:

«Վիոլա» ՍՊԸ-ն բողոքի քննության նպատակով 21.05.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից 26.05.2020թ. ներկայացվել է վերը շարադրված դիրքորոշման լրացում, որով հայտնել է, որ բողոքի վերաբերյալ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 22.05.2020թ. ներկայացվել է բողոքի լրացում /լրացումը ներկայացվել է «Վիոլա» ՍՊԸ-ին 25.05.2020թ./, որով բողոքաբերը հայտնել է հետևյալը.

«21.05.2020թ.-ի նիստով արձանագրվեց, որ գնումների պլանում հրապարակված չի եղել (Բողոքաբերը անգամ չի գրել, թե ինչը որտեղ հրապարակված չի եղել): Դա առաջացրել է մեր մոտ որոշակի խնդիրներ, մասնավորապես հենց 17-րդ չափաբաժնի մասով: Ուստի խնդրում ենք չեղարկել մրցույթը 17-րդ չափաբաժնի մասով, եթե հնարավոր է, եթե ոչ, ապա ամբողջ ընթացակարգը»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները…:

ՀՀ քաղ.դատ. օր-ի 62-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

«Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքի լրացմամբ որպես բողոքի պահանջ նշել է հետևյալը՝ խնդրում ենք չեղարկել մրցույթը 17-րդ չափաբաժնի մասով, քանի որ դա մեզ մոտ առաջացրել է որոշակի խնդիրներ:

«Վիոլա» ՍՊԸ-ն նշել է, որ «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի՝ բողոքով ներկայացված բողոքի լրացման իրավական հիմքի ուսումնասիրությունը վկայում է, որ ներկայացված իրավիճակի վրա չի կարող տարածվել ՍՊԸ-ի կողմից վկայակոչված պահանջը և առավել ևս գնահատող հանձնաժողովին չի կարող պարտավորեցվել Ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշում ընդունել, քանի որ վիճարկվող պահանջով բողոք կարող էր ներկայացվել միայն մինչև հայտերի բացման վերջնաժամկետը /տես՝ Հրավեր 12.4 կետ/:

Հրավերի 12.4 կետի համաձայն, եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացնում է սույն հրավերի 1-ին մասի 8.28-րդ կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում,

2) գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը:

Այս տեսանկյունից՝ «Վիոլա» ՍՊԸ-ն գտել է, որ հայտերի բացելուց և ընտրված մասնակից որոշելուց հետո ընթացակարգի չեղարկումը այն հիմքով, որ ընթացակարգով նախատեսված ծառայությունը գնումների պլանում հրապարակված չի եղել, չի բխում Օրենքի և Կարգի պահանջներից: «Վիոլա» ՍՊԸ-ն գտել է, որ եթե առկա է նման իրավիճակ (խնդիր Հրավերում՝ կապված գնումների պլանի հետ), ապա նման ընթացակարգը առավելագույնը պետք է վիճարկվի մինչև տվյալ ընթացակարգով հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը: Հակառակ դեպքում՝ կստեղծվի շատ արատավոր մի պրակտիկա, որը կոտնահարի տնտեսվարողների շահերը և էական վնաս կպատճառի պետությանը:

Մասնավորապես՝ մասնակցած և չհաղթած մասնակիցները այս հիմքով կկարողանան չեղարկել ցանկացած մրցույթ, ինչը կխախտի պատշաճ մասնակցած և հաղթած ընկերությունների իրավունքները: Եվ միևնույն ժամանակ կչեղարկվեն պետության կողմից կազմակերպված և գրեթե ավարտին հասցրած մրցութները:

«Վիոլա» ՍՊԸ-ն խնդրել է տեղիք չտալ նման արատավոր պրակտիկայի արմատավորմանը և նման հիմքով բողոքները քննության առարկա դարձնել բացառապես մինչև ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

«Վիոլա» ՍՊԸ-ն նշել է, որ բողոքի լրացման նման փաստական հանգամանքների պայմաններում Բողոքաբերի ներկայացրած պահանջը իրավաչափ չէ և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության և Հրավերի պահանջներից:

Բացի այդ՝ «Վիոլա» ՍՊԸ-ն փաստել է, որ Բողոքաբերը ընդամենը վերացական փաստել է, որ ենթադրաբար գնումների պլանը հրապարակված չլինելը Բողոքաբերի մոտ առաջացրել է որոշակի խնդիրներ: Սակայն դրանով իսկ ինչ խնդիրներ է առաջացրել և ինչով է խախտվել կամ սահմանափակվել «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի իրավունքները, մնում է միայն կռահել:

«Վիոլա» ՍՊԸ-ն գտել է, որ նման ոչ իրավաչափ եղանակով «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն փորձում է մանիպուլյացիայի ենթարկել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին: Մասնավորապես, նիստի ընթացքում հասկանալով, որ նախնական բողոքով ներկայացված իրավական հիմքով տեղի չի ունենալու իր ներկայացված գնային առաջարկի վերանայում, այս ոչ իրավաչափ եղանակով փորձում է չեղարկել բժշկական պարագաների ձեռքբերման ահռելի մրցույթ, ինչը էական վնաս կարող է պատճառել պետությանը և հետաձգել այդքան անհրաժեշտ բժշկական պարագաների ձեռքբերման մրցույթը:

«Վիոլա» ՍՊԸ-ն նշել է, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ սահմանվել է, որ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթացը սկսվելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Փաստորեն, գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն, գնման գործընթացը սկսելու համար անհրաշետ է, որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական

տեղեկագրում, որի դեպքում գնման գործընթացը համարվում է սկսված:

Վերոհիշյալ ընթացակարգի կազմակերպման գործընթացի ուսումնասիրությունը վկայում է, որ տվյալ գնման առարկան ներառված է գնուների պլանում, սակայն գնումների պլանը հրապարակված չէ www.gnumner.am կայքում: Սակայն տվյալ ընթացակարգի իրավական հիմքը առկա է, քանի որ գնումների պլանը հրապարակված է www.armeps.am համակարգում, և միայն www.gnumner.am կայքում այն չհրապարակելը, բավարար հիմք չէ տվյալ մրցույթը ամբողջությամբ չեղարկելու համար:

Այսպիսով՝ «Վիոլա» ՍՊԸ-ն գտել է, որ հայտերի բացելուց և ընտրված մասնակից որոշելուց հետո ընթացակարգի չեղարկումը այն հիմքով, որ գնումների պլանը www.gnumner.am կայքում հրապարակված չէ, չի բխում Օրենքի և Կարգի պահանջներից:

«Վիոլա» ՍՊԸ-ն նշել է, որ եթե առկա է նման իրավիճակ (խնդիր Հրավերում՝ կապված գնումների պլանի հետ), ապա նման ընթացակարգը առավելագույնը պետք է վիճարկվի մինչև տվյալ ընթացակարգով հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը: Հակառակ դեպքում կստեղծվի շատ արատավոր մի պրակտիկա, որը կոտնահարի տնտեսվարողների շահերը և էական վնաս կպատճառի պետությանը:

Մասնավորապես, մասնակցած և չհաղթած մասնակիցները այս հիմքով կկարողանան չեղարկել ցանկացած մրցույթ, ինչը կխախտի պատշաճ մասնակցած և հաղթած ընկերությունների իրավունքները: Եվ միևնույն ժամանակ կչեղարկվեն պետության կողմից կազմակերպված և գրեթե ավարտին հասցրած կարևոր մրցութները:

Ելնելով վերոգրյալից՝ «Վիոլա» ՍՊԸ-ն կրկին խնդրել է «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

<u>3. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի՝ 19.05.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/7375-2020 գրության՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու պահանջի վերաբերյալ, ՀՀ առողջապահության նախարարությունը գրությամբ հայտնել է, որ տրամադրում է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ փաստաթղթերը և հայտնել դիրքորոշում առ այն, որ ՀՀ առողջապահության նախարարությունը 2020 թվականի

ապրիլի 21-ին հայտարարել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով գնման ընթացակարգ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան (հայտերի բացման օրը՝ 29.04.20թ. ժամը 15:00-ին): Համաձայն հրավերի պահանջների՝ armeps համակարգի միջոցով հայտ ներկայացրած բոլոր կազմակերպությունները 05.05.20թ. հրավիրվել են բանակցությունների: Նախքան բանակցությունների սկսվելը, գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից նախապես հայտարարվել է, որ գների նվազեցումները պետք է կատարվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի պահանջներին համապատասխան: Մասնակիցների համաձայնությամբ, բանակցությունները իրականացվել են ըստ միավորի գների (առանց ԱԱՀ):

Բողոքաբերի բողոքը առնչվում է վերոնշյալ գնման ընթացակարգի 17-րդ չափաբաժնին՝ ՄԻԱՎ-ի հաստատման թեստ-հավաքածուին, որի մասով բացի բողոքաբերից գնային առաջարկ է ներկայացրել նաև «Վիոլա» ՍՊԸ-ն: Բանակցությունների հերթական քայլերից մեկի ընթացքում «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն, 17-րդ չափաբաժնի մասով հնչեցրել է իր կողմից նվազեցված միավոր գինը՝ 19,950 դրամ՝ առանց ԱԱՀ: Ըստ հերթականության, հաջորդ նվազեցված գինը ներկայացրել է «Վիոլա» ՍՊԸ-ն՝ 19,920 դրամ՝ առանց ԱԱՀ: Դրանից հետո, «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից կրկին գինը նվազեցնելու առաջարկ է արվել, որը գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից չի ընդունվել: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի պահանջները պահպանելու համար գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվել է հետհաշվարկ: Բողոքաբերի հնչեցրած միավոր գինը եղել է գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված վերջնական նվազեցված գին, քանի որ կրկին նվազեցման դեպքում պետք էր փոփոխություն կատարվեր ինքնարժեքում, որը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ պարտադիր պահանջին:

Բանակցությունների ավարտից հետո՝ հաջորդ օրը, «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկել է գնային առաջարկի բացվածքը՝ բանակցությունների արդյունքներով: Բոլոր նվազեցված չափաբաժինների, այդ թվում՝ նաև 17-րդ չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկը չի բավարարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի պահանջներին, մասնավորապես՝ նվազեցված գնի հաշվարկը կատարվել է միայն ինքնարժեքի նվազեցման հաշվին: Ներկայացված գնային առաջարկը գնահատող

հանձնաժողովի քարտուղարի կողմից առաջարկվել է շտկել և համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի նշյալ դրույթին, սակայն «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն այն չի ընդունել: «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփելուց և գնահատելուց հետո կազմվել է արձանագրություն, որում ներառվել է «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2020/49 ընթացակարգի շրջանակներում 21.05.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը և նիստի ընթացքում հայտնել, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող բժշկական նշանակության ապրանքների մասով հաստատված գնումների պլանը արտացոլված է միայն armeps.am/ppcm համակարգում և այն հրապարակված չէ տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/49 բողոքի և համանման բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/49 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***21.04.2020թ.***:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 15.05.2020թ. ներկայացված բողոքը և

բողոքի լրացումը, «Վիոլա» ՍՊԸ-ի և Պատվիրատուի դիրքորոշումները, «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով Ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Այսպես՝ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***21.04.2020թ.***:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով *www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է***:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***գնումների պլանը***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 19.05.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/7375-2020 գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ խնդրելով տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Ի պատասխան վերը նշված գրությամբ ներկայացված պահանջի՝ Պատվիրատուի ներկայացուցիչը նիստի ընթացքում բանավոր հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող բժշկական նշանակության ապրանքների մասով հաստատված գնումների պլանը արտացոլված է միայն armeps.am/ppcm համակարգում և այն հրապարակված չէ տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Այսպիսով՝ վերը նշված իրավական կարգավորումների համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է, որը օրենքով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում, իսկ տեղեկագիրը սույն օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է, մինչդեռ արձանագրում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ՝ առանց իրավական հիմքի, այն է՝ առկա չէ սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլան: Արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգն ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, այն հայտարարվում է չկայացած, ուստի նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում

քննության առարկա չի դարձնում բողոքով նաև ներկայացված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումների և գործողությունների իրավաչափության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից 15.05.2020թ. ներկայացված բողոքը բավարարել:
2. Պարտավորեցնել ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**